



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



« 15 » 07 2021թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0127-21

Ձեռնարկողը՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ  
Ք. Երևան, Կիևյան 16

Գործունեությունը՝

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդի փողոց հ. 74 հողամասում նախատեսվող ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0127-21

< 15 > 07 2021թ.

**Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդի փողոց հ. 74 հողամասում նախատեսվող ինժեներական քաղաքի ենթակառուցվածքների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝	«ՀԳՇՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսվում է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան Բագրևանդի հ. 74 հողամասում կառուցել ինժեներական քաղաք:

Գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրված 2021թ հունվարի 25-ի 01/18-07/1-Խ-3954-13 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականներով ամրագրված՝ Յհա, մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության համար տրամադրված հողամասը գտնվում է Երևան քաղաք Նոր Նորքի վարչական շրջանի Բագրևանդի 74 հասցեում և իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք: Հողատարածքի տարածքում բնության և պատմամշակութային հուշարձանները, ծառափայլի բուսականությունը, ջրային ռեսուրսները բացակայում են:

Համաձայն նախնական գնահատման հայտի ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հետևյալ շերտերը՝ սպիտակաոլորտ, տեղամասի սպիտակաոլորտ:



